ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/12» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստ

ք.Երևան
11 նոյեմբերի 2022

ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մկրտիչ Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ Հայկ Հովհաննիսյան, Պետրոս Մարգարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Նելլի Աբովյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/12» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնման ընթացակարգի հրավերի և հայտարարության տեքստը հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովի նախագահ Մ. Խաչատրյանը նիստը հայտարարեց բացված և հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից 10.11.22թ-ին ներկայացված գնման հայտը և ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության գլխավոր քարտուղար Ա. Նիկոյանի 10.11.22թ.-ի «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/12», ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով ստեղծելու մասին թիվ 571-Ա հրամանը, ներկայացրեց ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության կարիքների համար «Հատուկ նշանակության ավտոմեքենաների» գնման հայտարարության և հրավերի տեքստերը, գնման ընթացակարգի հետ կապված ամբողջ փաթեթը: Հանձնաժողովը ուսումնասիրեց և որոշեց՝

1. -հաստատել էլեկտրոնային աճուրդի միջոցով գնման ընթացակարգի հայտարարության և հրավերի տեքստերը (կցվում է),
2. -հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հետադարձ աճուրդի ավարտից հետո, նույն օրվա ընթացքում, ք.Երևան, Արշակունյաց պ 63:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0
Հանձնաժողովի

Նախագահ՝_____ Մ. Խաչատրյան

Քարտուղար՝_____ Ն. Աբովյան

Հանձնաժողովի անդամներ՝

1. _____ Հ. Հովհաննիսյան

2. _____ Պ. Մարգարյան